ասել. և մինչև ի խաչանիշել զսրբազնութիւնն յաւագ սեղանէ՝ գրեթէ պայթեցաւ տանջանօք ի փառացն Աստուծոյ, որպէս զդևն գերգեսացւոց որ ի դիւահարումն էր մինչ եւես ի հեռաստանէ՝ զփառազարդ գալուստն Քրիստոսի բազում ժողովրդօք, ի սաստիկ նախանձոյն աղաղակել սկսաւ և ասել Զի՞ կայ, և այլն: Եւ յետ այնորիկ ըսկսաւ ուրեք զհակառակութիւնս խօսիլ գաղտ ի դէմ մասանց հաւատոյ (քանզի ոչ կարէր յայտ խօսիլ) և ես լռեցուցի զքարոզն մինչև ի տօնն գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի: Եւ ի նմին աւուր յարեայ գրեթէ յառենի երկու հազար ժողովրդեանն, և ի ներկայութեան նուիրակին ջրել զամենայն հերձուածս գրեամբ հայոց և աստուածահնչիւն. և դարձեալ նօքօք հաստատել զամենայն ճշմարտութիւնս հաւատոյ. և ինքն արձանացեալ ի դասի լսէր զամենայն. և ժողովուրդն լցաւ ամենացեղ ուրախութեամբ յաղագս աքիբերան լինելոյ հերձուածին. և բազումք զքարոզն զայն գրեցին, որպէս զի նաև այլոց հանդիպողաց՝ նովաւ պատասխանեսցեն: Ապա յետ աւուրց ոմանց հարաւ ժանտամահն ի յոսկերս իւր և աշակերտին զոր ունէր և բարձան ի միջոյ. ուստի կատարեցաւ անէծն զոր ինքնին ասէր. Խռով եղնի իմ գլխին: Ահա ի սոցանէ եղև սկիզբն ժանտամահին, և յետ այսորիկ փախաք ի լերինս, զոր ի վերայ գրեցի : . . .

Ըստրուկ ծառայ Տեառնդ
Հայր Յակոբ Բուզայեա(ն)

1728 *սեպտեմբերի վերջն*
և սոյն աւուրս եկի՝ ի քաղաքն [Ախլցխա]
առողջութեամբ և տէր պահեսցէ

ԼԶ.

Այս թուղթը՝ իր պարունակութեան տեսակէտով՝ կրնայ շարունակութիւն և իբր լրացուցիչ մասն ծառայել նախընթաց ԼԳ. վաւերաթղթին մէկ գլխաւոր նիւթին:

Գերյարգելւոյ Տեառն Տեառն Մխիթարայ Հոգեւորի Հօրն իմոյ Աբբայի
Եւ Աստուածաբանութեան Վարդապետի, համբուրմամբ սրբազնեայ
աջոյդ. ողջոյն ի տէր Յիսուս

1728 *Սեպտ.* 25*ին*

. . . . Կարի սաստկացաւ մահն ասացին ի Սեաստ նոր եկօղքն. ընաւք վաճառականքն, որք էին աստ՝ նախապէս փախեան ի Սեաստ ի յերկիւղէ մահուան. և մինչ անդ ևս սաստկացաւ, ոչ աստ կարեն գալ, զի եկեալքն ըմբռնին ի մահուանէ և մեռանին, և ոչ անդ ի քաղաքն կարեն ագանիլ, այլ կամ ի բացօթեայ տեղիս և կամ ի սուրբ Նշան: Թանկութիւն անկաւ աստ, զի ոչ ոք համարձակի բերել զցորեան բաց ի Սեբաստացոց: Լուայ թէ ի Ղարահիսար հուր յերկնից անկեալ հրդեհեալ է զքաղաքն բաց ի սաստկութենէ մահուան. ասեն թէ ընդ ամենայն երկիրն տաճկաց գոյ սաստիկ մահ: ՅԱմասիա չորրորդ մասն մարդկանց հազիւ մնացեալ է. նմանապէս շրջակայ գիւղօրէքս այսորիկ քաղաքի : . . .

Մնամ ամենայնի նուաստագունեղ ծառայ
Գերապայծառութեանդ

ի Թուին Հայոց ՌՃՀԷ.ին — *Հ. Ս[տեփան] Վ. Թօխ[աթցի Պետրոսեան]:*

Հոկտեմբերի 2

գրեցաւ ի Թօխաթ